ՀՏԴ 929:947.925 Պողոսյան

Doi:10.54503/0135-0536-2024.2-249

ՀԱՅԿԱԶ ՄԱՆՈՒԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Անհատներ կան, որոնք իրենց ապրած կյանքով և գործունեությամբ խտացնում են ժամանակակից սերունդների նպատակները, բնավորությունն ու խառնվածքի էական կողմերն ու իրական ձգտումները և, ըստ այդմ, դրանք առաջ մղելու կամքն ու վճռականությունը: Միաժամանակ, պահպանելով իրենց սեփական դեմքը, ամենուրեք հավատարիմ մնալով իրենց մոտեցումներին՝ փոփոխվող միջավայրի նկատմամբ, որ այլ կերպ կոչվում է անհատականություն, որչափով նա մնում է եզակի ու անկրկնելի:

Այդպիսի անհատականություն էր մեր իրականության և պատմագիտության երևելի դեմքերի մեջ իր ուրույն տեղը գրաղեցնող Հայկազ Մանուկի Պողոսյանը, որի ծննդյան մեկդարյա հոբելյանը, թվում է, առատ փաստեր ու ընդհանրացումներ է ընձեռելու նրա կենսագրական ընթացքի ու գործունեության վերաբերյալ, բայց իրականում թե՛ մեկը և թե՛ մյուսը չեն կարող սպառել (թեև այնքան հարուստ են դրանք և բազմաբովանդակ) մարդու և քաղաքացու, գիտնականի և գործչի նրա նկարագիրը:

Հայկազ Մանուկի Պողոսյանը ծնվել է 1924 թ. մարտի 8-ին Երևանում, աշխատավորի ընտանիքում: Հանգամանքների բերումով ընտանիքը տեղափոխվում է Կոտայքի շրջանի Հացավան գյուղ: 1940 թ. նա ավարտում է Գառնի գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվում է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտ՝ միաժամանակ աշխատանքային գործունեություն ծավալելով: 1941 թ. աշխատում է Հացավան գյուղում՝ որպես պատմության ուսուցիչ: 1942 թ. զորակոչվում է խորհրդային բանակ, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին՝ մինչև դրա հաղթական ավարտը:

Նոր փուլ է սկսվում Հ. Պողոսյանի կենսագրության մեջ. նա շարունակում և ավարտում է ուսումնառությունը մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, որն ավարտում է 1948 թ.: Դրան հետևում են ուսման տարիներն ասպիրանտուրայում և թեկնածուական ատենախոսության հաջող պաշտպանությունը: Գիտական ձեռքբերումներին համընթաց՝ նա ներգրավվում է կուսակցական ու հասարակական աշխատանքների ոլորտ, որին

---

* Ներկայացվել է 17. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

մղում էին նրա քաղաքացիական լայնախոհությունն ու արդեն ճանաչում գտած կազմակերպչական անուրանալի կարողությունները: Ուսանելու ժամանակ ի հայտ եկան նրա անհատական շնորհները, ուղղամտությունն ու մարդկանց հետ առնչվելու անհատական որակները, որոնք հիմնավորում էին նրա գործունեության արդյունավետ դրսևորումները տեղի կուսակցական կազմակերպությունում: Իր շնորհակալ աշխատանքն այս ասպարեզում Հ. Պողոսյանը պետք է շարունակեր նույն ավյունով 1952–1954 թթ., երբ պատասխանատու պաշտոններ էր վարում ՀԿԿ օկրուգային կոմիտեում, ապա ղեկավարում Երևանի կուսակցության շրջկոմի բաժիններից մեկը: 1954–1957 թթ. նա ղեկավար աշխատանքներ է կատարել Երևանի տարբեր շրջանային կոմիտեներում, ապա՝ Արտաշատի շրջանային կոմիտեում՝ այստեղ ևս դրսևորելով իր համոզիչ կեցվածքն ու մարդկանց հետ առնչվելու փայլուն կարողությունները: Իր վարած բոլոր պաշտոններում Հ. Պողոսյանը մնում էր միշտ պարզ ու հասարակ, աշխատավոր մարդկանց մատչելի, ականջալուր նրա հոգսերին ու բողոքներին, ժողովրդական ղեկավարի զգացնել չտվող այն բարձրության վրա, որի վրա հենվում էր իր ժողովրդականությունը: Որտեղ էլ աշխատել է Հ. Պողոսյանը, ի հայտ է բերել մարդկանց լսելու, նրանց հուզող խնդիրներին լուծում տալու և սատարելու պատրաստակամություն: Ի բնե իրեն տրված մարդասիրությունը, անանձնական հայեցվածքը մարդկանց ու միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում նրան տանում էին դեպի կառուցվող շենքեր, աշխատավորական հուզված կոլեկտիվներ և պարզապես օգնության կարոտ ու մարդկային ջերմ խոսք ակնկալող անհատների մոտ: Եվ մարդիկ իրենց հերթին չէին մոռանում նրան, արդեն անկախ այն բանից, թե Հ. Պողոսյանը շարունակում էր զբաղեցնել իր իրավասության սահմանները ենթադրող պաշտոնը, թե ոչ:

Հ. Պողոսյանն օժտված էր հումորի անդավաճան ու մշտական զգացումով, որին նա հաճախ ելք էր տալիս՝ հանդարտեցնելու կամ սփոփելու դիմացինին կամ իրեն: Այդպիսին էր նա նաև այն տարիներին, երբ զբաղեցնում էր պետական ոչ պակաս կարևոր՝ Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի առաջին տեղակալի պաշտոնը:

1975–1979 թթ. Հ. Պողոսյանը յուրովի համատեղում է իր գործունեության երկու ուղղությունները՝ գիտամանկավարժական աշխատանքը և բուհական կյանքի ղեկավարումը՝ կատարելով Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի պարտականությունը: Այստեղ նա ցուցաբերեց ոչ միայն իր վաստակած աշխատանքային հարուստ փորձը և գիտելիքները բուհական իրականության ու մարդկանց ի սպաս դնելու կարողությունները (բուհական ուսումնակրթական կյանքի կազմակերպում և դրա առաջընթացի ապահովում, ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի նյութական ու կենցաղային դրության բարելավում և այլն), այլև նրանցից համարժեքը ստանալու խստապահանջ կեցվածքը: Կյանքի կոչված այս որակների հետևողական իրացումը ռեկտորի կողմից՝ զգալի դրական նշանակություն ունեցավ ամբողջ ինստիտուտի մակարդակով ուսման առաջադիմության և աշխատանքի նկատմամբ նվիրվածության ու արդարացիության զգացումների ամրապնդման համար: Ռեկտոր-ուսանողություն և ռեկտոր-պրոֆեսորադասախոսական կազմ կապերն ու փոխհարաբերությունները միշտ էլ աչքի են

ընկնում իրենց չդադարող և փոխադարձորեն ներգործող բնույթով ու այս ասպարեզում ևս Հ. Պողոսյանը գործում էր ըստ ամենայնի՝ իր չիտակության, անկաշառության և ուղղամտության բոլոր հատկանիշներով: Սակայն միջավայրը ոչ միշտ է փայփայում այդ որակները և որդեգրած ուղղության մեջ անհողդողդ ռեկտորը, հանուն իր սկզբունքայնության, թողեց իր պաշտոնը՝ ամբողջովին նվիրվելով գիտությանը: 1972 թ. նա պաշտպանել էր դոկտորական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, ապա 1973 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1979 թ. Հ. Պողոսյանը տեղափոխվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ՝ ստանձնելով ավագ գիտաշխատողի պարտականություններ: Դա նրան հնարավորություն տվեց ամբողջովին տրվել նախասիրած թեմային՝ հայ ազգային-ազատագրական շարժման և բնաշխարհում դրա կենտրոններ հանդիսացող՝ Զեյթունի, Վան-Վասպուրականի, Սասունի, ինչպես և ազատագրական շարժման հերոսների գործունեության պատմության հետագա ուսումնասիրությանը: Դեռևս 1969 թ. Հ. Պողոսյանը հրատարակել էր «Զեյթունի պատմությունը (1409–1921)» մենագրությունը: Առաջին անգամ մեր պատմագիտության մեջ՝ այստեղ ներկայացվում է Զեյթունի ամբողջական պատմությունը XV դ. սկսած մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն ու դրան հետևող մի քանի տարիները: Պատմական անդրադարձով հանդերձ՝ աշխատության առանցքը մնում է XIX–XX դարասկիզբ ընկած ժամանակաշրջանը՝ իր բազմաձավալ հիմնահարցերով ու դրանց հետևանքներով, և որոնք իրենց ամբողջության մեջ բացահայտում են Զեյթունի հայոց պատմության համար ճակատագրական նշանակություն ունեցող իրողությունները:

Այս աշխատության հրապարակմամբ, որպես հետազոտող, Հ. Պողոսյանը ձևավորում էր հայկական ընաշխարհի առանձին հատվածների ուսումնասիրման ձևաչափերը, մեթոդներն ու հիմնահարցերի խմբավորման սեփական, իր մշակած մոտեցումները, որոնք գիտական շրջանառության մեջ մտան նրա հետագա աշխատություններում: Այս գրքում արծարծված այդպիսի խնդիրների մեջ պետք է առանձնացնել Զեյթունի համապատասխան ժամանակաշրջանին վերաբերող պատմագրությունը, տեղի հայության սոցիալ-տնտեսական իրավիճակը, հայ լեռնականների համառ պայքարն իրենց կիսանկախ գոյավիճակի պահպանության համար (XIX դ. առաջին կես և 1862 թ. ինքնապաշտպանության շրջանում, այնուհետև՝ 1870–1890-ական թվականներ): Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ աշխատությունն ավարտվում է Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության տարիներին երիտթուրքական իշխանության իրականացրած՝ Զեյթունի բնակչության տեղահանության պատմությամբ՝ ընդհուպ մինչև 1921 թ. սեպտեմբերի սկզբների ողբերգական ավարտը: Հ. Պողոսյանին հաջողվել է ստեղծել հայեցակարգային կուռ և հետևողական ամբողջություն ներկայացնող ու դրամատիկ հագեցվածությամբ հատկանշվող մի աշխատություն, որտեղ պատմության գիտական բարեխիղճ վերարտադրության հետ ընթերցողին տրվում են կորսված հայրենիքի ու պատմական հիշողության անանց արժեքների պահպանության համար այնքան անհրաժեշտ խմացական ու բարոյական լիցքեր: Դրան են միտված առանձին ուշադրության արժանի զեյթունցիների՝ հերոսական մաքառումների ու դիմակայության բազմաթիվ և միաժամանակ եզակի օրինակները,

որ նրանք ցուցաբերեցին օսմանյան բռնակալության դեմ մղած իրենց անհավասար ու լեգենդար պայքարի ընթացքում: Պատմական փաստերի պարզ ու անպաճույճ շարադրմամբ ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատություններում Հ. Պողոսյանը վերհանել է զեյթունցիների հերոսական պայքարի տրամաբանությունը՝ կռվել ապրելու համար, աշխարհում ամենաթանկագին արժեքը՝ ազատությունը, պահպանելու համար, որ, ցավոք, ավարտվեց և՛ հայրենիքի, և՛ նրա հերոսական պաշտպանների կորստյամբ, փոխարենը՝ սերունդներին կտակելով մեզ համար անչափ կարևոր՝ պատմական հիշողությունը և այն պահպանելու կամքն ու ցանկությունը:

Իր հաջորդ՝ «Սասունի պատմությունը» (1985 թ.) աշխատությունն ընդգրկում է 1750–1918 թթ. ժամանակաշրջանը՝ պատմական ամբողջություն ներկայացնող հիմնահարցերի առաջադրմամբ և աշխատանքը եզրափակող՝ նույնքան ամբողջական եզրակացություններով: Այս գրքում հեղինակն առանցքային ուսումնասիրության նյութ է դարձրել հայ ազատագրական շարժման և դրա դրսևորումների իրական պատմությունը՝ հատկապես թանզիմաթի դարաշրջանում, դրան հետևող՝ մաքառման իրադարձություններին 1870–1900-ական թվականներ և ապա մինչև Առաջին աշխարհամարտ և Մուշի ու Սասունի 1915 թ. հերոսամարտերը: Գիտնականն այստեղ հատուկ ուշադրության է արժանացրել ազատագրական շարժման պատմությանն ուղեկցող և դրա ընթացքի վրա որոշակի ազդեցություն թողած գործոններին՝ Սասունի հայության սոցիալ-տնտեսական կացությանը, Սասունի նկատմամբ օսմանյան պետության վարած ջարդարարական ու վայրագ քաղաքականությանը և դրա բաղադրիչներին՝ Սասունի վարչական բաժանումներին, տեղի հայ բնակչությանը հետզհետե օրենքից դուրս հայտարարելուն ուղղված ու ահագնացող պատժիչ միջոցառումներին և այլն: Աշխատությունը գրված է Օսմանյան Թուրքիայի քաղաքական պատմության հենքի վրա, որտեղ ազդեցիկ բացահայտումներ կան այդ պետության նվաճողական ու բռնակալական բնույթի, հպատակ ազգերին ոչնչացնելու կամ ձուլելու դարավոր ուղեգծի վերաբերյալ: Այս վերջինի կերպափոխումների մեջ հեղինակը բնութագրական է համարում օսմանյան ծայրահեղորեն ազգայնական՝ լիբերալ գաղափարախոսությունն ու շարժումը՝ 1860–1870-ական թվականներ և հետո («Նոր օսմաններ», ապա երիտթուրքեր, որոնք 1915–1922 թթ. իրականացրեցին առաջին անգամ պատմության մեջ հայերի ցեղասպանությունը): Այս աշխատության մեջ՝ գրված կուռ եզրահանգումներով և անառարկելի փաստերի հիման վրա, Հ. Պողոսյանի ուշադրությունը սևեռված է Մուշում և Սասունում ընթացող ազատագրական պայքարի իրողությունների ու դրանց պատմական նշանակության վրա:

Վերոհիշյալ երկու աշխատություններով ուրվագծվում է Հ. Պողոսյանի հետազոտական մեծ ծրագիրը՝ գրելու ընդհարհում օսմանյան բռնակալության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման պատմությունը՝ դրան հարակից և ներհյուսված թեմաներով՝ ազատագրական շարժման ու նրա առաջատար դեմքերի գործունեության, դրանում ազգային կուսակցությունների դերակատարության, Օսմանյան Թուրքիայի քաղաքական պատմության գնահատականի և այլնի հիմնահարցերով հանդերձ: Հետազոտական այս ընթացքը պետք է կազմեր մի ամբողջական շարք, որի հաջորդ դրսևորումը եղավ պատմաբանի երրորդ աշխատությունը՝ «Վասպուրականի պատմությունը 1850–

1900» (1988 թ.) խորագրով, որը նրա հետազոտական ծրագրի շարունակությունն էր, հերթական նոր խոսքը մեր պատմագիտության մեջ՝ թե՛ իբրև մտահղացման շարունակություն, և թե՛ խորքային բովանդակությամբ: Աշխատության մեջ ծավալուն և ուսումնասիրության նպատակի ու խնդիրների համեմատ՝ առաջնահերթ տեղ է հատկացված Վանի հայության լուսավորական-կրթական վիճակին, հանրային-մշակութային հաստատություններին, դպրոցներին և այլն: Մատենագրական և արխիվային ու պատմագիտական տեղեկությունների ամուր հենքի վրա Հ. Պողոսյանը, փաստորեն, վերարտադրել է Վան-Վասպուրականի գավառի վարչաքաղաքական տեղավայրերի (Թիմար-Տոսպ, Արճակ, Աղբակ, Բերկրի, Արճեշ, Խոշաբ և այլն) պատմությունը՝ գիտական շրջանառության մեջ դնելով հետազոտական-տեղեկատվական բազմաթիվ նոր նյութեր և մասամբ՝ վերախմաստավորելով հայտնի նյութերն ու, հատկապես, վիճակագրական տվյալները: Այս ամենով հանդերձ՝ աշխատության առանցքն ու գլխավոր հիմնահարցը մնում են ազատագրական շարժումները և ինքնապաշտպանական կռիվները 1870–1896 թթ.: Հեղինակն առանձին սիրով և ուշադրությամբ է վերհանել հայդուկային շարժումների նշանակությունն ու ազգապահպան բնույթը, որն իր կարևոր հետևանքները պետք է թողներ Վանի իրադարձությունների հետագա ընթացքի վրա՝ հատկապես 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության հմուտ կազմակերպման և ժողովրդի մարտնչող ոգու հոգեբանական դրսևորումների տեսակետից: Դրան են հետամտում Հ. Պողոսյանի շոշափած առանձին թեմաները, որոնք կազմում են մեկ ամբողջություն և լրացնում աշխատության բովանդակային առանցքը: Այդպիսիք են աշխատության մեջ քննարկված հայ-քրդական և հայ-ասորական փոխհարաբերությունները Վասպուրականում և Մ. Խրիմյանի գործունեությունը Վանում ու գավառներում, հասարակական բախումները Վանում և, վերջապես, ազատագրական շարժումներն ու ինքնապաշտպանական կռիվները 1896 թ.:

Հ. Պողոսյանի այս շարքի վերջին գործերից է «Փարամազ» աշխատությունը (1991 թ.)՝ նվիրված ազատագրական շարժման փառապանծ դեմքերից մեկի՝ Ս.–Դ. կուսակցության անդամ Փարամազի (Մատթեոս Սարգիսյան) ազգանվեր գործունեությանն ու ողբերգական ճակատագրին: Հեղինակն այստեղ հաջողությամբ համադրել է միջավայրի և անհատի ազգային նկարագիրն ու պատմական իրականությունը՝ ցույց տալով նաև, որ այդ միջավայրում գործող անհատն իր զորեղ կամքի և բնավորության շնորհիվ կարողացել է մարտահրավեր նետել իրականությանը և հաղթահարել սպասելի ու անսպասելի դժվարությունները մինչև վերջ, ընդհուպ մինչև հրաժեշտը կյանքին: Պատմաբանի շարադրանքը հասնում է դրամատիկ լարվածության, որի հանգուցալուծումը ներշնչում է այն եզրակացությունը, որ Փարամազը և կախաղանի վրա իրենց մահկանացուն կնքած նրա տասնինը ընկերները խորհրդանշում էին ազատագրական պայքարի պարտությունն այդ ժամանակաշրջանում, ինչպեսև արդեն սանձազերծված՝ հայերի ցեղասպանության իրողությունը Օսմանյան Թուրքիայում:

Եթե այս ամենին ավելացնենք Հ. Պողոսյանի բազմաթիվ հոդվածները, հրապարակումներն ու ակնարկներն իր նախասիրած թեմաներով, կտեսնենք, որ իր իմաստալի, բայց և ոչ տևական կյանքի ընթացքում (վախճանվել է 1996

թ. հունվարի 16-ին) նա հասցրեց ստեղծել բեղմնավոր և դրանով հանդերձ՝ արդյունաշատ մի գիտական գրականություն, որն իր անկրկնելի և միայն իրեն տրված տեղն ունի հայ ազատագրական շարժման պատմագիտության մեջ:

Իր գիտական գործունեությունը Հ. Պողոսյանը ծավալում էր ճանաչողական միանշանակ ընթացքով՝ նաև պատմական կարևորագույն արժեք ունեցող և բնագրային գործերի մշակման ու հրատարակության ուղղությամբ: Նրա ընդարձակ և արժեքավոր ծանոթագրություններով հրատարակվեցին Լ. Նորաշխարհյանի «Զեյթունը 1914–1921 թթ.» (1984 թ.), Ա. Տևկանցի «Այցելություն ի Հայաստան 1878» (1985 թ.) և Ե. Տևկանցի «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872–1873 թթ.» (1991 թ.) նոթագրական գործերը:

Վերջում անդրադառնանք մեր շարադրանքի սկզբին, որտեղ համառոտ ակնարկ արվեց անհատ և իրականության փոխհարաբերության առումով: Եթե հանրագումարի բերենք Հ. Պողոսյանի գիտական վաստակի տրամաբանությունը, նրանում հնարավոր չէ չնկատել երկու ամփոփ սկիզբների՝ ազատագրական շարժման և նրա գործիչների կենսական, ուրեմն և թեմատիկ միահյուսումը. երբ անհատը գնում է դեպի հանրային պահանջմունք՝ ապացուցելով իր ողջ ընդունակությունը՝ անցնելու հանրայնացված (կոլեկտիվ) գործողությունների և շարժման: Կարո՞ղ են այսօր հայ անհատները և միջավայրը (այդ լինի Մայր հայրենիքում, թե Սփյուռքում) գոյացնել այդպիսի միասնություն՝ այս է, կարծում ենք, այսօր մեր առջև ծառացած գոյատևման խնդիրը և, միաժամանակ, Հ. Պողոսյանի՝ որպես հայ մարդու և գիտնականի թողած գիտական ժառանգության արդիական արժեքի ու հրատապության իմաստը:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմություն, Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 8 մենագրության և ավելի քան 200 հոդվածի: ORCID:0009-0005-8436-1288. alkhar39@mail.ru